



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՎԱԳՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 1837/10)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

22 նոյեմբերի 2018թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Ավագյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ,*

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Թիմ Այքե [Tim Eicke],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2018 թվականի հուլիսի 10-ին եւ հոկտեմբերի 23-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի
պրն Խոսրով Ավագյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի
Հանրապետության՝ 2009 թվականի դեկտեմբերի 28-ին Դատարան
ներկայացված գանգատի (թիվ 1837/10) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ
տկն Հ. Հարությունյանը եւ պրն Ա. Մելքոնյանը: Հայաստանի Հանրապետության

կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ իրեն հնարավորություն չի տրվել քրեական վարույթի ընթացքում հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված փորձագետներին:

4. 2016 թվականի մայիսի 24-ին դիմումատուի՝ փորձագետներին հարցաքննելու հնարավորություն չունենալու վերաբերյալ բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1946 թվականին եւ ապրում է Երեւանում:

6. 2007 թվականի հունվարի 2-ին երկու տարեց քույրեր՝ Մ.Գ.-ն եւ Վ.Գ.-ն, վերջինիս բնակարանում, որտեղ նրանք միասին ապրում էին, հայտնաբերվել են մահացած, որից հետո քրեական հետապնդման մարմինները սկսել են նրանց մահվան փաստի առթիվ քննություն: Ըստ երեւույթին, դիմումատուն ճանաչել է Վ.Գ.-ին, որը 2006 թվականի ապրիլի 5-ին կտակ էր կազմել, համաձայն որի՝ նա իր բնակարանը կտակել էր դիմումատուին:

7. Նույն օրը հանձնարարվել է իրականացնել դատաբժշկական փորձաքննություն, այդ թվում՝ դիահերձում՝ որոշելու համար, *inter alia* (ի թիվս այլնի), երկու քույրերի մահվան պատճառը:

8. 2007 թվականի փետրվարի 2-ին փորձագետ Ա.Դ.-ն ներկայացրել է երկու եզրակացություն (թիվ 22 եւ թիվ 23): Համաձայն առաջին եզրակացության՝

Մ.Գ.-ի մահը վրա է հասել սուր սրտային անբավարարությունից, որի պատճառը եղել է մարմնի ցածր ջերմաստիճանը, իսկ թիվ 23 եզրակացության մեջ նշվել է, որ Վ.Գ.-ի մահը վրա է հասել հիպոթերմիայից:

9. 2007 թվականի փետրվարի 9-ին դատախազը որոշել է ավարտել [քրեական գործով] քննությունը: Թիվ 22 եւ թիվ 23 դատաբժշկական փորձաքննությունների վրա հիմնվելով՝ դատախազը հանգել է այն եզրակացության, որ քույրերի մահը չի եղել դիտավորության կամ անզգուշության հետեւանքով:

10. 2007 թվականի փետրվարի 14-ին դիմումատուն Վ.Գ.-ի կտակը ներկայացրել է նոտարին եւ տվել նրա բնակարանը ժառանգելու իր համաձայնությունը:

11. 2007 թվականի հունիսի 1-ին Մ.Գ.-ի եւ Վ.Գ.-ի զարմուհին դիմել է դատախազություն՝ նշելով, որ չնայած Վ.Գ.-ն դեռեւս 1991 թվականին նոտարով հաստատված կտակով բնակարանը կտակել է իրեն, ինքը տեղեկացվել է, որ դիմումատուն միեւնույն բնակարանի մասով ներկայացրել է մեկ այլ կտակ, համաձայն որի՝ բնակարանը անցել է վերջինիս: Նա պնդել է, որ այդ կտակի վրա իր հորաքրոջ ստորագրությունը կեղծված է եղել:

12. Պարզ է դառնում, որ 2007 թվականի հուլիսի 11-ին Մ.Գ.-ի եւ Վ.Գ.-ի դիակների արտաշիրիմումից հետո իրականացվել է դիակների լրացուցիչ հետմահու դատաբժշկական փորձաքննություն՝ որոշելու համար, *inter alia*, թե արդյոք թիվ 22 եւ թիվ 23 դատական եզրակացություններով ճիշտ է որոշվել մահվան պատճառները, եւ եթե ոչ, ապա արդյոք հնարավոր է, որ նրանք մահացել են թունավորված լինելու պատճառով:

13. 2007 թվականի օգոստոսի 7-ին քննիչը որոշել է [ստորագրությունը] կեղծելու փաստի առթիվ քննություն սկսել:

14. Պարզ է դառնում, որ քննության որոշակի փուլում դիմումատուն հայտնել է, որ ինքը երբեք չի այցելել այն բնակարանը, որտեղ բնակվել են Մ.Գ.-ն եւ Վ.Գ.-ն, եւ չի իմացել, թե որտեղ է այն գտնվում: 2006 թվականին Վ.Գ.-Ն, որին դիմումատուն ճանաչել է, եկել է իր տուն՝ իրեն հանձնելու որոշ փաստաթղթեր, մասնավորապես՝ կտակը եւ նոտարի կողմից տրվող այլ փաստաթղթեր՝ տեղեկացնելով դիմումատուին, որ նա իր բնակարանը կտակել է իրեն:

15. 2007 թվականի սեպտեմբերի 25-ին Գ.Հ.-ն եւ Ա.Բ.-ն տվել են թիվ 13/631/Կ եւ թիվ 14/630/Կ փորձագիտական եզրակացությունները, համաձայն որոնց՝ երկու քույրերն էլ մահացել են ֆոսֆորոզանական միացություններով թունավորվելու հետեւանքով:

16. 2007 թվականի սեպտեմբերի 26-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել խարդախություն կատարելու եւ շահադիտական դրդումներով սպանության համար՝ երկու դրվագով: Հաջորդ օրը նա կալանավորվել է:

17. Դատատեխնիկական եւ թունաբանական փորձաքննությունն ավարտվել է 2007 թվականի դեկտեմբերի 21-ին: Դիմումատուի դատահոգեբանական, դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննության արդյունքներն ստացվել են 2008 թվականի փետրվարի 8-ին: Երեք փորձագետներ՝ Գ.Հ.-Ն, Ա.Դ.-ն եւ Մ.Ա.-ն, փորձագիտական եզրակացությունների առնչությամբ ցուցմունք են տվել համապատասխանաբար 2007 թվականի դեկտեմբերի 6-ին, 2008 թվականի հունվարի 25-ին եւ փետրվարի 5-ին:

18. 2008 թվականի մայիսի 26-ին Մ.Գ.-ի եւ Վ.Գ.-ի դիակների լրացուցիչ արտաչիրիմումից հետո նշանակվել է դիակների լրացուցիչ հետմահու դատաբժշկական փորձաքննություն, որոնք ավարտվել են 2008 թվականի հունիսի 27-ին: Ս.Հ.-ի եւ Ս.Ս.-ի կողմից ներկայացված թիվ 12/525/Կ եւ 13/526/Կ փորձագիտական եզրակացություններով հաստատվել է, որ երկու տուժողների մարմիններում էլ առկա են եղել ֆոսֆորոզանական միացություններ:

19. 2008 թվականի հուլիսի 8-ին դիմումատուի գործն ուղարկվել է Երեւանի քրեական դատարան՝ դատական քննության:

20. 2008 թվականի օգոստոսի 26-ի դատական նիստի ընթացքում բարձրաձայն հրապարակվել են բոլոր փորձագետ-վկաների եզրակացությունները: Այնուհետև դիմումատուն բանավոր խնդրել է հնարավորություն ընձեռել՝ մասնագիտական գիտելիքներ պահանջող մի շարք հարցեր պարզաբանելու նպատակով դատարանում հարցաքննելու փորձագետ-վկաներ Ա.Դ.-ին, Ս.Հ.-ին եւ Ս.Ս.-ին, ովքեր ներկայացրել էին հակասական եզրակացություններ: Դատարանը որոշել է հետաձգել գործի քննությունը:

21. 2008 թվականի սեպտեմբերի 25-ի դատական նիստի ընթացքում դիմումատուի ներկայացուցիչը կրկին խնդրել է հարցաքննել փորձագետ-վկաներին, բայց նրա խնդրանքը բանավոր մերժվել է առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից: Դատավորն իր որոշումը պատճառաբանել է՝ նշելով, որ քանի որ Ա.Դ.-ի կողմից ներկայացված առաջին եզրակացության բովանդակությունն արդեն իսկ պարզաբանվել է դրան հաջորդող փորձագիտական եզրակացություններով, ուստի փորձագետ-վկաներին կանչելու անհրաժեշտություն չկա:

22. 2008 թվականի հոկտեմբերի 21-ին Երեւանի քրեական դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել երկու դրվագներով՝ շահադիտական դրդումներով ծանրացնող հանգամանքներում սպանություն կատարելու համար եւ դատապարտել՝ ցմահ ազատազրկման: Այդպիսով, այն հիմնականում հիմնվել է տուժողների հարազատների եւ հարեանների՝ դատական քննության ժամանակ տված ցուցմունքների վրա, որոնք պնդել են, որ դիմումատուն մի քանի անգամ քույրերին իրենց բնակարանում այցելության է գնացել, ինչպես նաեւ փորձագիտական եզրակացությունների, դիմումատուի բնակարանից առգրավված իրեղեն ապացույցների, մասնավորապես՝ Վ.Գ.-ի բնակարանի առնչությամբ սեփականության վկայականի եւ Վ.Գ.-ի՝ 2006 թվականի ապրիլի 5-ին կազմված կտակի բնօրինակների եւ վերջինիս մահվան վկայականի կրկնօրինակի վրա: Դիմումատուին մեղավոր ճանաչելով՝ առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նաեւ այն փաստը, որ նա նախկինում դատապարտված է եղել ֆինանսական

շահ հետապնդելու նպատակով ծեր կնոջ սպանության համար՝ վերջինիս բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով:

23. Դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պնդելով, *inter alia*, որ ինքը զրկված է եղել փորձագետների հակասական եզրակացությունների առնչությամբ նրանց հարցաքննելու հնարավորությունից:

24. Վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 12-ին մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը՝ առանց անդրադառնալու դատական քննության ընթացքում փորձագետներին հարցաքննելու անհնարինության վերաբերյալ նրա բերած բողոքին:

25. 2009 թվականի հուլիսի 2-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ ներկայացնելով նմանատիպ բողոքներ, ինչպես եւ նախկինում:

26. 2009 թվականի հուլիսի 28-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի բողոքը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)

27. 114-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության պարզաբանման կապակցությամբ: Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը (114-րդ հոդվածի 3-րդ մաս):

28. 243-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա:

29. 247-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են կասկածյալի եւ մեղադրյալի իրավունքներն այն դեպքում, երբ նշանակվել է փորձաքննություն,

ներառյալ՝ մինչեւ փորձաքննությունը կատարելը փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը ծանոթանալու իրավունքը, փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունքը, ինչպես նաեւ փորձագետի հարցաքննությանը մասնակցելու իրավունքը, եթե դա կատարվում է իր միջնորդությամբ:

30. 252-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ չէ եւ ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ, կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները եւ հասկացությունները, քննիչն իրավունք ունի հարցաքննելու փորձագետին՝ վկայի հարցաքննության նկատմամբ կիրառվող կանոններին համապատասխան:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

31. Դիմումատուն բողոքել է, որ իրեն զրկել են փորձագետներին՝ նրանց եզրակացություններում առկա հետետությունների հավաստիությունը վիճարկելու նպատակով հարցաքննելու հնարավորությունից, մինչդեռ դրանք համարվել են իր մեղադրանքը հիմնավորող վճռորոշ ապացույցներ:

32. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ 3-րդ կետի «դ» ենթակետը շարադրված են հետեւյալ կերպ՝

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... տրիբունալի կողմիցարդարացի ... լսումների իրավունք:

...

3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

...»:

Ա. Ընդունելիությունը

33. Դատարանը նշում է, որ գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

34. Դիմումատուն պնդել է, որ վարույթի որեւէ փուլում ինքը չի կարողացել հարցաքննել փորձագետներին, որոնց եզրակացությունները, որպես ապացույց, օգտագործվել են իր դեմ: Իրեն չի տրվել փորձագետներին հարցեր ուղղելու հնարավորություն, *inter alia*, այն փաստի վերաբերյալ, թե թունավորման պատճառ հանդիսացող պեստիցիդները ե՞րբ եւ ինչպե՞ս են հայտնվել տուժողների մարմիններում, արդյո՞ք դրանք օգտագործվել են մեկ կամ մի քանի անգամ, ի՞նչ քանակությամբ պեստիցիդը կարող է մահ առաջացնել, եւ արդյո՞ք

որեւէ պատճառահետեւանքային կապ եղել է մահվան եւ պեստիցիդի օգտագործված քանակության միջեւ: Այդ մերժման արդյունքում դիմումատուն զրկվել է իր դեմ ներկայացված մեղադրանքները վիճարկելու բավարար եւ պատշաճ հնարավորությունից: Այդպիսի հնարավորությունը կարետոր կլինէր նաեւ այն պատճառով, որ մինչդատական վարույթի ընթացքում հարցաքննվել են միայն երկու փորձագետ, իսկ դատական քննության ընթացքում նրանցից ոչ ոք չի հարցաքննվել:

35. Դիմումատուն ընդգծել է, որ փորձագետների հարցաքննությունը մերժելու որեւէ հիմնավոր պատճառ չի եղել: Նրանց ցուցմունքները գործի արդարացի լուծման համար վճռորոշ նշանակություն են ունեցել, քանի որ տուժողների մահվան պատճառը պարզված չի եղել: Մյուս թույլատրված ապացույցները բավարար չեն եղել դիմումատուի մեղքը հաստատելու համար, քանի որ դրանք հիմնականում եղել են անուղղակի ապացույցներ եւ հիմնված են եղել սուբյեկտիվ վկաների ցուցմունքների վրա:

բ) Կառավարությունը

36. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն հնարավորություն է ունեցել հարցաքննելու փորձագետներին, որոնց եզրակացությունները դատական քննության ընթացքում օգտագործվել են իր դեմ: 2008 թվականի օգոստոսի 26-ին դիմումատուն խնդրել է հարցաքննել փորձագետներ Ա.Դ.-ին, Ս.Հ.-ին եւ Ս.Ս.-ին, ովքեր ներկայացրել էին հակասական հետետություններ պարունակող՝ թիվ 22-23 եւ թիվ 13/525/Կ-13/526/Կ եզրակացությունները: 2008 թվականի սեպտեմբերի 25-ին Քրեական դատարանը կողմերին տրամադրել է այդ առնչությամբ փաստարկներ ներկայացնելու հավասար հնարավորություններ: Դիմումատուի ներկայացուցիչը պահանջել է միայն պարզաբանել փորձագիտական եզրակացությունների միջեւ եղած հակասությունները: Այդ հարցն արդեն ուսումնասիրվել եւ պարզաբանվել էր դիակի լրացուցիչ հետմահու դատաբժշկական փորձաքննության թիվ 14/630/Կ եւ 13/631/Կ եզրակացություններում: Այդ եզրակացություններից պարզ էր դառնում,

որ նախորդ թիվ 22-23 եզրակացությունների եզրահանգումները ներհատուկ են նաեւ ֆոսֆորօրգանական միացություններով թունավորմանը: Ուստի դիմումատուի միջնորդությամբ ներկայացված ոչ մի հարց չէր մնացել անպատասխան: Փորձագետներ Գ.Հ.-ն, Ա.Դ.-Ն եւ Մ.Ա.-ն, ովքեր տվել էին վերը նշված ցուցմունքները, մինչդեռ տական վարույթի ընթացքում նույնպես հարցաքննվել էին:

37. Կառավարությունն ընդգծել է, որ դատական քննության ընթացքում փորձագետներին հարցաքննելը գործի ելքի վրա որեւէ ազդեցություն չէր կարող ունենալ: Ավելին, դիակի լրացուցիչ հետմահու դատաբժշկական փորձաքննությամբ հստակորեն պարզաբանվել էին առաջին փորձագետի եզրակացությունների արդյունքները: Ուստի փորձագետների՝ դատարան չներկայանալն ունեցել է հիմնավոր պատճառներ: Քրեական դատարանի դատավճիռը հիմնված է եղել մի շարք տարբեր ապացույցների վրա: Ուստի դիմումատուի դատապարտումը բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված չի եղել կոնկրետ այն փորձագիտական եզրակացությունների վրա, որոնցով նույնիսկ հնարավոր չի եղել ապացուցել, թե ով է թունավորել տուժողներին: Սույն գործով եղել են նաեւ պաշտպանության կողմին խոչընդոտող պայմաններում աշխատելու դիմաց փոխհատուցում տրամադրելու բավարար հակակշռող գործոններ: Գործի քննության շրջանակներում նշանակված առերեսման ընթացքում դիմումատուն ունեցել է հնարավորություն հարցաքննելու այն վկաներին, ովքեր նախկինում ցուցմունքներ էին տվել իր դեմ, բայց նա համաձայնել է չվիճարկել նրանց ցուցմունքների հավաստիությունը:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

38. Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի կիրառությունը կարգավորող հիմնական սկզբունքը արդարացիությունն է: Արդար

դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ այնքան կարևոր տեղ է զբաղեցնում, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները նեղ իմաստով մեկնաբանելը որեւէ կերպ չի կարող արդարացվել (տե՛ս *Մորեյրա դե Ազեվեդոն ընդդեմ Պորտուգալիայի* [*Moreira de Azevedo v. Portugal*], 1990 թվականի հոկտեմբերի 23, § 66, շարք Ա, թիվ 189, եւ *Գրեգաչեվիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Gregačević v. Croatia*], թիվ 58331/09, § 49, 2012 թվականի հուլիսի 10):

39. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ մեղադրյալին համարժեք եւ պատշաճ հնարավորություն տրվի՝ վկայի կողմից իր դեմ տրված ցուցմունքը վիճարկելու կամ նրան հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս *Ալ-Խավաջան եւ Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* [GC]], թիվ 26766/05 եւ թիվ 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011, եւ Պոլետանը եւ Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության [*Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 26711/07, 32786/10 եւ 34278/10, § 81, 2016 թվականի մայիսի 12):

40. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի իմաստով «վկա» եզրույթն ունի ավտոնոմ նշանակություն, որը նաեւ ներառում է փորձագետ-վկաներին (տե՛ս *Գրեգաչեվիչի գործը՝ վերելում հիշատակված*, § 67, եւ *Կոստանտինիդեսն ընդդեմ Հունաստանի* [*Constantinides v. Greece*], թիվ 76438/12, §§ 37-38, 2016 թվականի հոկտեմբերի 6): Այնուամենայնիվ, փորձագետ-վկաների դերը կարող է տարբերակվել այն վկաների դերից, որոնք Դատարանին ներկայացնում են իրենց անձնական հիշողությունները որոշակի իրադարձության վերաբերյալ (տե՛ս *Խոդորկովսկին եւ Լեբեդեւն ընդդեմ Ռուսաստանի* [*Khodorkovskiy and Lebedev v. Russia*], թիվ 11082/06 եւ 13772/05, § 711, 2013 թվականի հուլիսի 25): Վերլուծելով, թե արդյոք դատական քննությանը փորձագետի անձամբ ներկա լինելն անհրաժեշտ էր՝ Դատարանը,

հետեւաբար, հիմնականում կղեկավարվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված՝ «արդար դատաքննության» հասկացության սկզբունքով եւ մասնավորապես՝ «մրցակցային դատավարության» եւ «կողմերի հավասարության» երաշխիքներով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի իմաստով «վկաների» անձնական հարցաքննության վերաբերյալ Դատարանի որոշ մոտեցումներ, անկասկած, վերաբերելի են փորձաքննությամբ ստացված ապացույցների ուսումնասիրության համատեքստում եւ կարող են կիրառվել *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով)՝ պատշաճորեն հաշվի առնելով նրանց կարգավիճակի եւ դերի հետ կապված տարբերությունները (տե՛ս Բյոնիշն ընդդեմ Ավստրիայի [*Bönisch v. Austria*], 1985 թվականի մայիսի 6, շարք Ա, թիվ 92, հաջորդող հղումների հետ միասին, եւ *Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* [*Matytsina v. Russia*], թիվ 58428/10, § 168, 2014 թվականի մարտի 27):

41. Ապացույցների թույլատրելիությունն ի սկզբանե ներպետական իրավունքով կարգավորման ենթակա հարց է: Կոնվենցիայի համաձայն՝ Դատարանի խնդիրը ոչ թե որոշում կայացնելն է, թե արդյոք վկաների ցուցմունքները պատշաճորեն թույլատրելի են ճանաչվել որպես ապացույց, այլ հաստատելը, թե արդյոք վարույթն ամբողջությամբ, այդ թվում՝ ապացույցների ձեռքբերման եղանակն արդար են եղել (տե՛ս, ի թիվս այլ մի շարք վճիռների, *Վան Մեհելենը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [*Van Mechelen and Others v. the Netherlands*], 1997 թվականի ապրիլի 23, § 50, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1997--III*): Մասնավորապես, «որպես ընդհանուր կանոն՝ ազգային դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաեւ այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով, կրկին որպես ընդհանուր կանոն, նրանց թույլատրվում է գնահատել վկային կանչելու նպատակահարմարությունը» (տե՛ս *Վիդալն ընդդեմ Բելգիայի* [*Vidal v. Belgium*], 1992 թվականի ապրիլի 2, § 33, շարք Ա, թիվ 235-Բ):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

42. Դատարանը նկատում է, որ Քրեական դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել երկու դրվագներով՝ ծանրացնող հանգամանքներում սպանություն կատարելու համար, եւ դատապարտել նրան ցմահ ազատազրկման: Գործի նյութերը բաղկացած են վեց փորձագիտական եզրակացություններից, որոնցով, *inter alia*, որոշվել է տուժողների մահվան պատճառը: Թեեւ փորձագետ Ա.Դ.-ի կողմից ներկայացված երկու սկզբնական եզրակացություններում նշվել է, որ երկու քույրերը մահացել են սրտային սուր անբավարարությունից եւ հիպոթերմիայից (տե՛ս վերելում՝ 8-9-րդ պարբերությունները), փորձագետներ Գ.Հ.-ի եւ Ա.Բ.-ի, ինչպես նաեւ փորձագետներ Ս.Հ.-ի եւ Ս.Ս.-ի կողմից տրված լրացուցիչ եզրակացություններից պարզ է դառնում, որ տուժողներին թունավորել են (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 18-րդ պարբերությունները): Դիմումատուն խնդրել է փորձագետներ Ա.Դ.-ին, Ս.Հ.-ին եւ Ս.Ս.-ին կանչել առաջին ատյանի դատարան՝ նրանց կողմից ներկայացված հակասական եզրակացությունների առնչությամբ նրանց հարցաքննելու հնարավորություն ունենալու համար, սակայն առաջին ատյանի դատարանը մերժել է նրա խնդրանքը՝ համարելով, որ այդ փորձագետներին կանչելու անհրաժեշտություն չկա: Ո՛չ առաջին ատյանի դատարանը եւ ո՛չ էլ Վերաքննիչ քրեական դատարանն իրենց դատավճիռներում չեն անդրադարձել այդ հարցին (տե՛ս վերելում՝ 22-րդ եւ 24-րդ պարբերությունները):

43. Ինչպես բազմիցս Դատարանը նշել է, արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությամբ վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորություն, որը գործով վերջնական որոշում է կայացնելու, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի եւ նրա վստահելիության վերաբերյալ կարող են հետեւանքներ ունենալ մեղադրյալի համար (տե՛ս *Հանուն ընդդեմ Ռումինիայի [Hanu v. Romania]*, թիվ 10890/04, § 40, 2013 թվականի հունիսի 4, հաջորդող

հղումների հետ միասին): Նույնը կիրառվում է նաև փորձագետ-վկաների մասով (տե՛ս *Գրեգաշեվիչի գործը՝ վերելում հիշատակված*, § 67). Դատարանի ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ պաշտպանության կողմը պետք է ունենա, որպես այդպիսին, ոչ միայն փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելու եւ վիճարկելու իրավունք, այլ նաև եզրակացությունները նախապատրաստողների վստահելիությունն ուղիղ հարցաքննության միջոցով վիճարկելու իրավունք (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բրանդշտեթերն ընդդեմ Ավստրիայի* [*Brandstetter v. Austria*], 1991 թվականի օգոստոսի 28, շարք Ա, թիվ 211, *Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների* [*Doorson v. the Netherlands*], 1996 թվականի մարտի 26, §§ 81-82, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1996-II, *Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* [*Mirilashvili v. Russia*], թիվ 6293/04, § 158, 2008 թվականի դեկտեմբերի 11, եւ *Մափիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործը՝ վերելում հիշատակված, § 177):

44. Սույն գործով դիմումատուն առաջին ատյանի դատարանին հստակորեն հայտնել է, որ ինքը ցանկանում է դատարանում հարցաքննել փորձագետ-վկաներին մի շարք այնպիսի հարցեր պարզաբանելու համար, որոնք պահանջում են մասնագիտական գիտելիքներ (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը): Դատարանի համար այդ պահանջը ձեւակերպված է եղել բավականին հստակորեն՝ բացատրելու համար, թե ինչու էր դիմումատուի համար կարեւոր տվյալ վկաներին լսելը:

45. Առաջին ատյանի դատարանը մերժել էր դիմումատուի խնդրանքը՝ գտնելով, որ Ա.Դ.-ի կողմից ներկայացված առաջին եզրակացության բովանդակությունն արդեն իսկ պարզաբանվել էր դրան հաջորդող փորձագիտական եզրակացություններով, եւ հետեւաբար փորձագետ-վկաներին կանչելու անհրաժեշտություն չկար: Արդյունքում փորձագետ-վկաներ Ա.Դ.-ն, Ս.Հ.-ն եւ Ս.Ս.-ն առաջին ատյանի դատարանում չեն լսվել, ոչ էլ մյուս երեք փորձագետ-վկաներն են դատարանում լսվել: Ըստ երեւոյթին, մինչդատական վարույթի ընթացքում հարցաքննվել են միայն փորձագետ-վկաներ Ա.Դ.-ն, Գ.Հ.-ն եւ Մ.Ա.-ն:

Այնուամենայնիվ, չկա որեւէ տվյալ, որ դիմումատուին երբեւէ ունեցել է այդ փորձագետ-վկաներին առերես [հարցաքննելու] եւ քննության փուլում նրանց եզրակացությունները վիճարկելու հնարավորություն:

46. Դատարանը համարում է, որ դիմումատուի՝ առաջին ատյանի դատարանում Ա.Դ.-ին, Ս.Հ.-ին եւ Ս.Ս.-ին լսելու խնդրանքն անհիմն չէր: Ընդհակառակը, Դատարանը գտնում է, որ այդ փորձագիտական եզրակացությունները գործի համար հիմնարար նշանակություն ունեին: Հիմնվելով այդ ապացույցների վրա՝ ներպետական դատարանները պետք է որոշում կայացնեին՝ արդյոք քույրերի մահը եղել է դժբախտ պատահար, թե դիտավորությամբ կատարված սպանություն: Դիմումատուի խնդրանքն անհիմն չէր նաեւ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա դատապարտվում էր ցմահ ազատազրկման: Դատական քննության ժամանակ փորձագետ-վկաներին չկանչելով եւ նրանց չհարցաքննելով՝ առաջին ատյանի դատարանն իր եզրակացությունները կատարելիս հիմնվել է փորձագետ-վկաների ցուցմունքների վրա, որոնք երբեք դատական նիստերի ժամանակ չեն ուսումնասիրվել (տե՛ս, ի հակադրություն դրա, *Կաշլեւն ընդդեմ Էստոնիայի [Kashlev v. Estonia]*, թիվ 22574/08, § 47, 2016 թվականի ապրիլի 26):

47. Տվյալ հանգամանքներում այն փաստը, որ Քրեական դատարանն անձամբ չի լսել փորձագետ-վկաներին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, կարող էր մեծապես ազդել դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես՝ «մրցակցային դատավարության» եւ «կողմերի հավասարության» երաշխիքների վրա: Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**48. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝**

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

49. Դիմումատուն պահանջել է 15 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

50. Կառավարությունը համարել է, որ դիմումատուի պահանջը ոչ նյութական վնասի մասով հիմնավորված չէ եւ չափազանցված է եւ պետք է մերժվի: Դիմումատուի կողմից ներկայացված ոչ նյութական վնասի վերաբերյալ պահանջը կարող է փոխհատուցվել՝ խախտում արձանագրելու միջոցով:

51. Դատարանը դիմումատուին շնորհում է 900 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

52. Դիմումատուն նաեւ պահանջել է 7 200 եվրո՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի մասով, որը պետք է անմիջականորեն վճարվի իր ներկայացուցիչների հաշվեհամարին:

53. Կառավարությունը համարել է, որ դիմումատուի կողմից պահանջված գումարը չափազանցված է եւ հիմնված է փաստաբանի վճարի՝ չափազանց բարձր սակագնի վրա: Դիմումատուն իր պահանջը հիմնավորելու համար չի ներկայացրել իր ներկայացուցիչների հետ կնքված որեւէ համաձայնություն:

54. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ Դատարանի նախադեպային իրավունքը՝ Դատարանը մերժում է ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը՝ հաստատող համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով:

Գ. Ջկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

55. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում.

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի 900 եվրո (ինը հարյուր եվրո)՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական

կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի նոյեմբերի 22-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս

Քարտուղար

Նախագահ